կներշնչէ նա քո մէջ: Այդ ազնիւ մարդը քո հօր բարեկամն է եւ նրա գաւառի հինգ տանուտէրներից մէկը: Նա եւս ենթարկոեցաւ միեւնոյն բարբարոսութիւններին, քո հօր տունը բնաջինջ լինելուց յետոյ: Այդ պատմութիւնը գուցէ նա ինքը կհաղորդէ քեզ:

Պառաւի վերջին խօսքերը որսորդ Աւօյի մասին էին: Ուրեմն նա հասարակ մարդ չէր. որսորդի ծպտեալ դիմակի տակ ծածկուած էր մի խորհրդաւոր անձնաւորութիւն: Այդ րոպէից ես հասկացայ նրա առանձին ուշադրութեան գաղտնիքը, որ ունէր դէպի Կարօն:

— Այժմ փակի՛ր իմ աչքերը, — շարունակեց հիւանդը, գլուխը ցած թողնելով բարձի վրայ: — Եթէ կուզես կրկին ձեռք բերել քո հօր իշխանութիւնը, դու կը գտնես այն փոքրիկ սնդուկի մէջ բոլորը, ինչ որ քեզ հարկաւոր է...

Նա աշխատեց ձեռքը մեկնել դէպի պատուհանը, ուր դրած էր փոքրիկ սնդուկը, բայց ձեռքը թուլացաւ, ընկաւ վերմակի վրայ:

Նրա աչքերը կրկին բացոեցան եւ անշարժ նայում էին դէպի երկինքը: Կարծես այնտեղ, վերին երկնակամարի այն կողմը, նրա առջեւ բացուած լինէր յաւիտենական աթոռը, եւ նա շնորհ, զօրութիւն, յաջողութիւն էր մաղթում այն էակի համար, որին իր ձեռքով էր սնուցել, իր բազուկների վրայ էր մեծացրել:

Նրա ալեւոր գլուխը թեքոեցաւ, երեսի վրայ երեւացին մի քանի ցնցումներ, աչքերը դարձեալ փակոեցան...

— Նա մեռաւ՛... — բացականչեց Կարօն, առանց մի կաթիլ արտասուք անդամ աչքից թափելու:

Ես զարմանում էի նրա քարասրտութեան վրայ: Որպէ՞ս սառնութեամբ լսեց այդ բոլորը: Կարծես, նա ամէնը գիտէր, կարծես, դայակի պատմածները նրա համար նոր բաներ չլինէին: Բայց նա ոչինչ չգիտէր իր ծագումի մասին, նա իրան միշտ համարում էր պառաւ Զումրուդի թոռը:

Ես սխալւում էի: Կարօն բոլորովին հանգիստ չէր: Նրա կերպարանքի գունաթափ, միեւնոյն ժամանակ խաղաղ կեղեւի տակ բորբոքւում էր մի սարսափելի կրակ, որ նմանում էր ծածկուած հրաբուխի: Նրա սիրտը փոթորկւում էր կատաղի խռովութեան մէջ: Ես այն ժամանակ չէի կարող հասկանալ նրա բնաւորութեան բոլոր զօրութիւնը, թէ որքան զգացմունք, որքան կամքի ուժ կար այն անչափահաս պատանու մէջ, իսկ այժմ բոլորը հասկանում եմ, նա ծածկեց մեռնող կնոջ երեսը, եւ մի քանի րոպէ լուռ ու անշարժ նստած էր նրա մօտ: